

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԿԱՅԻՌՍ ԳՐԱԿԲՈՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՎԻՆԿԵՆՏԻ ՄՈՆՃԵԱՑ

—♦♦♦(ՏԵՍ ՀԱՏՈՐ ԽԶ. ԷԶ 348)♦♦♦—

ՀԱՆԴԵՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԼիկինիԱ

Qի' տըխուր լոռութիւն, ոհ, քանի դառն ամայի.
Ատեանս այս բարձ և թող, ուզիք թափուր են համակ,
Եւ ոչ զայլ ոք յանցուգարձ ընդ նոսին աշքիմ դիտեն,
Բայց ըզդէմը թախծալից եեթ ծերոց ահարեկս,
Յարտօսր հարեալ աղի, և յունկն իմ ոչ հասանեն՝
Բայց ողորմ հառաջանք մարց, և հարսանց հեծեծանք.
Ոյց կական բարձեալ աղերս 'ի ճիշ 'ի կոծ գերաշխար,
Զորդիս և զամուսինս անձնիւր հայցեալ պաղատին: . . .
Ո՞հ, և ես ինքն աստանօր հեծեմ, յերկնից թախանձեմ
Զանգութն այն՝ որ ելիք զիս լալագին յարտասուս . . .
Ո՞հ, այս, անկարեկիրըդ զու, թողուլ լըքանել
Ժուժեցեր զիս, հանգուրժել կարացեր, քաջըդ կայէ . . .
ի նանիր արտաստոք իմ և ողբոց հառաջանք:
Խոկ արդ ովլ ոք մարթասցի ասել ինձ հար շըրջիցիս,
Եւ կամ ում ումեք, եղնւկ, պատմել՝ կայցես կենդանի:

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԼիկինիԱ. եւ ԾԵՐՆ' որ յերրորդումն Հանդիսի, 'ի բաց դարձուցա-
նելով զպատանեակն իւր՝ յաղմըկէ Աւենտինեան լրին։

ԵԿՐԱ

Ա՛խ, որդեակ իմ, փարելի ասեմ, որդեակ սիրասուն,
Ո՛հ մի, մի կացցես ընդդէմ ինձ. աղէ տուր զսուրդ 'ի բաց,
Յանձն 'ի գողգոյուն ձեսս իմ գու զնոյն արասջիր:
Քաւ քեզ զայն, խելայեղդ, յեղբարցդ արիւն շաղախել,
Զի եղբարք քո են սոսիբն. որոց ընդդէմ խիզախես...
Աստուածքըն, տիսանես, մեզ հակառակ մարտընչին,
Եւ հոյլք մեղանաց հոռվմէական քաղաքիս՝
Կապեալ հրամանօք բաշխից՝ յերկունս հասուցին
Զյղացեալն հոռվմէական ազատութեան զժամ յետին։
Գերասքանն իսկ արութեան Գրակքեայ անկար է համրուն
Փըրկութիւն նորին. և գու զայն, խելացնորդ, իշխիցմա...
»

Լիկինիա (մեկոսի)

Սարսուիմ ես բովանդակ... յոտից ցըզլուխըս գողամ...
Հարցանել կամիմ... և բանք իմ ըստ շըրթունս չելանեն։

ԵԿՐԱ

Ո՛հ, մի ես, եկեսջիր, որդեակ, գայջիր Եհ ընդ իս.
Անձկալիդ իմ, միայնակ նեցուկ կենացս հիւծելոյ.
Եկ առջիր ընդ իս 'ի յողբս ըզկործանումն հայրենեաց,
Մեռանել 'ի ցաւոց, այլ անարատ մեռանել։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ԼիկինիԱ.

Երկոքեանդ անշուշտ բախտին Գրակքեայ զիտակք էին քաջ.
Իսկ ընդէր ուրեմըն ոչ կալայ զնոսին հարցանել...
Ո՛հ, և զի է զի քիրտըն ցուրտ ճակատս իմ վիժէն...
Հիմ, աստուածք անազորոյնք, աղէ գոգէք՝ առ իմէ
Պաղատանք հարց 'ի սըրտի որդւոց լինին գամազիւտ,

իսկ 'ի սիրտ առն՝ արտասուք հարսանց չիցեն խորամուխ . . .
Այլ զինչ այս տղաղակ խառնաշրջովթ արհաւրաց . . .
Զինչ թընդիւնք ձայնից ընդ օդս այս 'ի հեռուստ . . . Հռովմողջյն
Սարսուել գոգցես գղըրդի . . . Ե'ն, և զինչ . . . Մայրս աւասիկ :

ՏԵՍԻԼ ԶՈՐՌՈՐԴ

Կ Ո Ռ Ն Ե Լ Ի Ա Ե Ի Լ Ի Կ Ի Ն Ի Ա

Լիկինիա

Ո'վ մայր իմ, մւր իցէ կայիրս, ազատ է, ողջ է!
Ոչ տայ ինձ պատասխանի . տագնապալիցն իւր այն գնացք,
Դաշկահար դէմքն և լոռոթիւն, եղմւկ, պատմեն իսկ յայտնի
Զի մեռեալ է ամուսինն իմ . . . ով օգնէ ինձ . . . նուաղիմ . . .³

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Լիկինիլ եւ Կիլինէլիլ, որ մսանմ՝ բարծեալ 'ի գիրկս իւր զմանկիկն
Կայիրսի, եւ զիետ նորա ազատագրեալ Փիլոկրթէն:

Կոռնելիիա

Երթիցուք, զիետ իմ գայթիր, հաւատարիմէ 'ի ծառայս . . .
Զինչ հայիմ . . . դառնութեամբ ցաւոց ընկճեալ գեղկելիս . . .
Եւ արդ զինչ գործեցից . . . մհ, ֆիլոկրատէսդ իմ, առ զսա,
Ա'ռ գու զանմեղուկըս զայս, ընթա, ոլացիր օն,
Ա'ծ ողջամբ զինքն 'ի ծածուկ' 'ի յապարանս անդ կրասսեայ . . .
Ո'ն, թըռիր, սլացիր, 'ի մէր քոյին զնս յանձն ես առնեմ . . .
— Արթ, գուստը իմ, յոյս 'ի սիրտդ անկցի, զեռ ողջ է կայիրս :

Լիկինիա

Դեռ ողջ կայիրս, և մւր է, և զի՞ ոչ տեսանեմ,
Եւ ընդէր չիցէ նա նդ քեզ, աղէ խօսեաց :

Կոռնելիիա

Ո'վ գուստը իմ,
Ո'ն, և զինչ իցէ ասել ինձ զի սփոփանք քեզ լիցին .

1. Կոռնելիա տադնապալց հատեալ անցանէ զհանդէս տեսլարանին առանց ինչ
պատասխանի առնելցյ :

2. Դողդոջուն թալկացեալ անկանի զաստիմանոք տրիբունական բեմին :

Եւ մի պատրանաց համայն արկցեն զքեզ՝ի վարմ...
Առողեալ արեամբ զեղուն են ճանապարհը յԱւենտին,
Ընդ ամբոխն ու ՚նդ ծերակոյտըն մոյի ռազմն արիւնուշտ,
Եւ վընոեալ սահմանեսցի ՚նդ հուպ թէ նըզնվս համօրէն
կարդայցեսք մեք ընդ մերոցս արգանդից բերըս բեղուն,
թէ որդիս ազատութեան և կամ ըստրուկս և գերիս
Հարսանց հռովմայեցւոց իցէ յլենալ յայսմհետէ:
Այլ այժմիկ ՚ի ժամն աստ խոր նիրհեն բնաւ օրէնք.
Եղերանց սոսկ թօթափեալ զքուն, և ՚ի բոխն զսոսկալի
Վառեալ զարդարութեան զպողովատիկըն զերկաթ,
Ընդ հռովմ մղջոյն սրարշաւ զեռան, յորդեն, հարկանեն,
Մահու տան ճարակ զազատասէր վեհ որեարն ...

Լիկինիա

Եւ զի՞նչ կամիս ասել. իսկ արդ կայինս...

Կոսնելիա

Լեր գու ինձ,
Լեր արի, և զսիրտդ ընդդէմ գըժնէ բախտին պընդեսջիր.—
Գիտես քաջ զի պատույ իւրում սլացաւ նա պաշտպան
ի լետան անդ Աւենտին, առ ժողովուրդըն խօսել,
Եւ կարճել զԴրուսոսի, զկաշառաբեկն Հռաբիրեայ
Զանարդ զըրպարտչացըն բամբասանս լուտանաց:
Եհաս անդր, և անդէն համակ մարմովս յամբոխին
կուռ վառեալ լոկ վահանաւ ամբըծութեանըն սըրտի,
Խօսեցաւ, և զդաւաճանս իւր պապանձեալ կարկեցոյց,
Երենելս իմ անդանօր՝ ՚ի զլուխ ած զայլն ամենայն,
Զի և ես ինքն անվեհեր չքայ, զվուանգաք քամահեալ:
Եւ էր իսկ ամբոխին հանդարտեալ բուռն յուզմանէ,
Մինչ անդրէն զայն բորբոքեալ վառեաց ֆուլուիոս ՚ի զայրոյթ.
Ինքն համակ կոտորածիս այսմիկ զըրգոփիշ հեղինակ,
Ինքնին ևս ըսպանդից նորին՝ ՚ի թիւս արդ անկեալ:
Արդ ՚ի խուան անդ շըմորեալ խուժանին քոյդ ամուսնոյ,
Պատրել զքեզ չառնում յանձն, է իսկ կենացըն վտանգ մեծ:
Ընթացայ ես ՚ի վահան զմայրենի կուրծս իմ զինել,
Եւ սուսերբըս զոր կըրեմ վառել գէթ զաջ իւր ՚ի զէն.
Խուռախսիտ սակայն զամբոխըն խոյընդոտն ինձ գըտեալ,
Արգելայ, և ամենուստ զինե զաշոյնս և նիզակս,
Եւ խոցեալս և խոյխողեալ տես ՚ի քըթթել անդ ական,

Եւ ուղիք համայն զդընացս իմ աստանօր ձըգեցին։
Այլ 'ի զէնս անդ վառելց արիապէս ո.ա.հ հորդեալ,
Եւ զէնքն ինձ արահետ պատկառանօք մատուցին,
Մինչ անդէն գեռ 'ի նախճիրս, յողորմ 'ի ճիշ արհաւրաց,
Այս ոք ընթացեալ դիմէ և այն խոսափէն,
Մինչ և իմ ըզվելաբրեայ քերեալ գեռ զջուրան ափնածիր,
Քըստմնեալ զարհուրանօք զընթացս այսրէն ճէպէի,
Տեսի քաջ 'ի բացեայ... ով Տէր, տեսիլ զինչպիսի...
Ո՞հ, և զինչ է զոր պատմեմս... եղմէկ...

Լիկինիա

Ո'վ մայր իմ, մի զիս,
Մի զիս աղեկէզ առներ, յառաջ վարեսչիր,
Եւ զինչ տեսեր, ասա, զինչ օն տեսեր։

Կոռնելիա

Ո'հ, գուստր իմ...
Նիզակս և սակերս և մերկացեալ սուր դաշոյնս,
Եւ զժանտ ծերակոյսն և ուհավիրայս և զինուորս,
Եւ գլուխ յառաջնթաց զընդին զահեղն Ռպիմէ.
Իմանաս քաջ յով ընթացք նորին, և զոյր ուրուք լանջս
Այդքան զէնք քինախանձ, այդքան բարկութիւն խընդրիցեն...
Այլ 'ոհ, մի յուսակըտուր ցաւոց յանդունդս անկանիր.
Են են մեծ վուանզբ ամուսնոյդ կենաց, այլ մեծ ևս իցեն
Արութիւնք իւր, աներկրայ լեր, են յերկինս անդ Աստուածք։

Լիկինիա

Են այս, այլ ոչ արդարք . և յոր աստուածս, ով մայր իմ,
Դեռ ևս յոյս իցէ ունել. աղէ յաստուածսն յայնոսիկ
Որոց գէմ իսկ յանդիման սպանաւ անմեղ քոյդ Ցիրեր,
Յայսցանէ կամիցիս ուրեմն ինձ տկն արդ ունել
Փըրկութեան ամուսնոյս իմոյ, 'ի դիցս յայսցանէ:
Վաշ, աւաղ ինձ լըքելցյս. եղուկ, կայէ, քեզ եղուկ...
Առ ով ոք աղերս արիից հայցել ես ըզնոյն,
Եւ կամ ում ումեք այժմիկ քեզ 'ի թիկոնն հասանել.
Ի վագերց զայդ հեշտագյուն պաղատախառն ինձ հայցել,
Առ հողմըս մանաւանդ առնել աղերս փըրկութեան,
Ըզմբըրիկս և զանդունդ ծովուց 'ի դոյն հրաւիրել,

Զորս հատեալ քաջայանդուգն՝ այսրէն պլացար յօդնութիւն
Ըզչովմնըւանեալ յազատութեան փառս հանել...
Ո՞վ գառն հայրենեաց սէր, լաւութեան վարձք զըժնեայ...
Եւ արդ, յով ուրեք, եղմէկ, իցէ զգընացս իմ ուղղել
Զի մի զկորուսելոյ ցանդ զամուսնոյս յիշատակ
Հետամուտ ինձ ունիցիմ... Աստ զիրաւունս ամբոխին
Որոտայր նա ՚ի տեղովմ՝ յահ ու ՚ի կորուստ խեռելոց,
Անդանօր ժողովուրդն համայն զնա հայր իւր ձայնեաց.
Անդ ազգաց ազգաց հրեշտակը ըզնա փըրկիչ կարդացին,
Բարերար ամենեցուն, ամենեցուն յոյս, նեցուկ,
Եւ, ոհ վասք, ամեներին լըքեալ թողին զինքն այժմիկ...
Տի օն, դուք ինքնին, Հոսովմայ դուք բլուրք, արիք զարթիջիք
Առ ՚ի վրէժ յարերուք անմեղութեանն ընկճելոյ,
Դորդեալ թօժափեսչիք ըզկողըս ձեր, հիմյատակ
Քանդեալ աւերեցէք զքաղաքըս զայս ամբարիշտ,
Զորջացեալս ՚ի ըըռնաւոր և յապաշնորհ բիւր ժանտից.
Այլ և զիս իսկ ՚ի վերայ նոցունց, և զիս ինքնին, ոհ,
Թաղեսչիք անդ ՚ի յաւերսն իւր:

Կոսնելիա

Պատառէ զաղիսն իմ:

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

Արաջին ԳԱՂԱՔԾՅԻ, որ տագնապաւ ՚ի բաց խուճապէ,
Եւ ԱՌԱՋԻՆՔՆ:

Քաղաքացին

Ո՞վ կին դու, զինչ առնես. կախի զորդոյ քումմէ մահ.
Առ ՚ի գին արծաթոյ եղաւ զլուխ իւր, ոչ զիտես: (Խոսք ՚ի բաց)

Լիկինիա

Երկինք, զինչ և զոր լուայ:

Կոսնելիա

Զինչ ինչ ասաց. որդոյս գլուխ
Ազիրատ մարդասպանի հանգոյն վարձու կըշուցու...

Հոռվմ անդութ , շնորհ առ դրժնեայ դառն անարգանսըդ կալայց :
Դարձ յոդիս իմ հուսկ ուրեմն առնէ նախկինս արութիւն ,
Յիս ինքն հուսկ ապա հասու լեալ ճանաշեմ զիս այժմիկ .
Ե՛լ ծն , ել , մայրենի երկիւղ , սըրտէս այս 'ի բաց .
Ե՛կ , գուստը իմ ; Ե՛կ ընդ իս . խրախոնյս , ընդ իս , ծն , գայջիր :

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Երկրորդ ՔԱՂԱՔԱՑԻ . ըստ օրինակի առաջնոյն զարնուրանօք
ի բաց փախչելով . եւ ԿՈԲՆԵԼԻԱ . եւ ԼԻԿԻՆԻԱ :

Քաղաքացին

Ըզտեղի կալջիք , կանայք դուք , մի զայդ սեամնդ անցանէք ,
Է անշուշտ ամենուրեք մահ , կոտորած և արիւն :

Կոռնելիա

Խակ որդիս իմ . . .

Քաղաքացին

Եղկելի մայր , ոչ ևս է քեզ որդի : - (Խոռոք 'ի բաց)
(Եկիմիա առ սաստկաբեան ցաւոց իւլայեղի)

Կոռնելիա

Առ իմէ դարձեալ դողամ ես , առ իմէ դիզացեալ
Խըրձանան 'ի ճակատուս հերքս իմ , և ցուրտ յիս սարսուռ
Յերակունս արդ սողոսկի գնայ . արութիւն իմ , մի զիս ,
Մ' զիս լըքաներ :

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Երրորդ ՔԱՂԱՔԱՑԻ . ԿՈԲՆԵԼԻԱ . եւ ԼԻԿԻՆԻԱ :

Քաղաքացին

Ազատ է որդիդ :

Խընդա դու , կին գերափառ ,

Կոռնելիա և Լիկինիա

Ո՞հ , ցընծութիւն . . .

Լիկինիա

Այլն իմ ազատ ...

Կոռնելիիա

Որդեակն իմ, պատմեսջիր աղէ ...

Լիկինիա

Պատմեա, խօսեսջիր,
ի նոր կեանս ահա դառնայ հոգիս՝ ի լանջ իմ՝ լըսեւ:

Քաղաքացին

Հետամուտ՝ ի կրետացի վաշտէն՝ զանցնիւր պազատէր
Սուսերի միոյ զշնորհը՝ մեռանել զմահ քաջի.
Այլ ապախտ հայցուածոյն՝ յարութեան ճիզն յուսահատ
Առ ոսոխս իւր դիմագրաւ արկանէր զանձն եղկելին,
Արհամարհ զկեանս իւր եղեալ, անփոյթ զոգւոյն արևէ:
Այլ անդէն առետեղ բարեկամացն ապրելոց
Անդուլ անդադար յոլովակի պաղատանք
Յետու՝ ի դառըն խորհըրդոց մըտացն ըզնա կացուցին.
Եւ պարտք սըրբանուէր ուսուցին զանձըն պահել
Յօդուտ հայրենեաց, որոյ պատուէրք հրամանի
կեալ մեզ սահմանեն, մինչ անօդուտ մեռանել
Գործ է վատութեան, իսկ կեալն՝ հանդէս քաջարի:
Յաղերս այսքան բըռնադատ յայնժամ, այլ ոչ ինչ յօժար,
Դարձ ընդ կրունկն՝ ի սըրբանուէրն ետ խոյս յանտառ կատա-
[զեաց...]

Կոռնելիիա

Եւ զինչ է զոր պատմեսդ, այր դու, առ մայրըն Գրակեանց.
Փախուստ ամօթալի զերծոյց ըզկեանըս որդւոյս:

Քաղաքացին

Վատըւէր դահճաց՝ ի ձեռս ուրեմն՝ անարդ ևս ոգւով՝
Է՛ր նըմա զայնքանի ազնըւադութ թողուլ կեանս:

Կոռնելիա

Իսկ քո յայնժամ հարկանել՝ լըկայր ուրեմն սուսեր։

Քաղաքացին

Սուսերն առ թընամիս, առ բարեկամն՝ արին իմ,
 Զոր և, կին դու, կամակար տայի՝ հայցեալ զայն յինէն։ —
 Այլ զոյգ Ուպիմեայ կատաղի գունդ պատրըկաց,
 Եւ կրետիան աղեղնաւորքն իւր նետաձիգք անողորմք
 Ընդ փախուստ կայեայ գըրգուեալ մոլենախանձ բարկութեամք,
 Կոտորածըս ժանտաժուտ ածեն թափեն մերայնոց,
 Եւ զիետ փախըստիցն՝ առաքեն զմահ նետալաց.
 Պոմպոնեայ և Լիկինիայ ևեթ ընդգէմ կան նոցին
 Լանջքն արիասիրտ ՚ի Սուրբիկեանն անդ բարձու։

Կոռնելիա

Իսկ այլքըն վատասիրտք համայն, վատաց միշտ ամբոխ,
 Եւ ցանդ ապերախտ՝ լըքեալ մատնեն զորդեակն իմ։

Քաղաքացին

Աստուածքն ըղնա, ով կին դու, մատնեցին, քաւ ամբոխն,
 Ում վրկայ կացցեն մարմինք մարդկան խոցեալ բիւր և բիւր
 Ի ռամկաց դասուէն, Գրակըեայ վասն իրաւանց՝ դիտապաստ,
 Եւ խոց ՚ի ճակատուէն ու ՚ի կուրծ անդ խոց դիտապաստք։
 Հոծ և լի Տիրերիս յապուռ մերոց դիականց,
 Ոյր ՚ի ջուրսն արիւնաներկ՝ աչք յարհաւիրըս քըստմինին։
 Եւ յետ այսր ամենայնի . . . Այլ աղէ լուր զձայն զինուց . . .
 Հայեաց, յամենուստ ահա խուժեն խուսափեն
 Խուռն ամբովս ժողովրդեան զարհուրագին պակուցմամք . . .
 Ահ, անշուշտ գայ հասանէ անագորոյնըն բըդեաշխ . . .
 Օ՞ն, փախիր։

Կոռնելիա

Ես փախիցիմ. ես պատահել ընթանամ։

ՏԵՍԻԼԻՆՆԵՐՈՐԴ

ԿԱՑԻՌԱ. բուռն խուճապմամբ ՚ի ներքս դիմելով եւ ԱՌԱՋԻՆՔՆ.

Կայիռու

Սուսեր մի, մվ մայր իմ, պաղատիմ, սուսեր մի.
Զի մի վատն այն ըզմահուան իմց պարծանըս տարցի.

Կոռնելիա

Բըռնաւմրն այն զայդ պարծանս. քաւ, մի լիցի...

Կայիռու

Ե՛հ, մայր իմ,
Սուսեր մի. զոր ունիսդ ՚ի ձեռին տուր, տուր առ իս,
Խնայեա յիս, ապրեցո յանարգալից մահուանէ.

ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ՈՊԻՄԻՌԱ ընդ պատրըկաց եւ զօրականաց վառելոց, եւ ԱՌԱՋԻՆՔՆ.

Ապիմիռու

Ինքն ահա. զէնք ձեր ՚ի սիրտս նորին իջեն, մըխեսցին:

Կոռնելիա (Թայիռով ձգե զանձն բնդ կայիռու և բնդ զօրականն)

Հարուածքդ ունին ընդ սիրտս այս նախ ընդ թափ անցանել:

Լիկինիա (զնոյն գործելով)

Եւ ընդ այս, անագորոյնք:

Ապիմիռու

Զկանայսըդ զայդ, զօրականք,
Ի բաց քարշեցէք բըռնի, հարէք զապիրատն,
Է գլուխ նորին պարգե հասարակաց վըրկութեան.
Օ՞ն, հարէք:

Կոռնելիս

(Չետամբ միով զգույխ իւր ընդ ձորէովն ծածկեալ, և միւսովն արագակես տաղով առ որդին զդաշոյնն :)

Ո՞ւ, որդեակ իմ, առ, մեռիր քաջաբար :

Կայիսու

Ի պարգևս յայս աւասիկ՝ ես ճանաչեմ զքեզ, ո՛վ մայր .
ի հարուածս յայս գու ծանիր զորդիդ : — (Գնայ զիրովի :)

Լիկիևիս

(Ճերով մեծաձայն անկանի յերկիր կիսամեռ :)

Ո՛վ Տէր... մեռանիմ :

Թարգմ. Հ. Աթանաս Տիրութեան

ՎԵՐԱ

ՓԱՐԻԶՈՒ ԱՇԽԱԲԱԴԱՆԴԵՍՆ

— 38 —

ԱՐՑԵԶԸ թողլով՝ հետեինք հովանաւոր ծառուղւոյն որ գեղարուեստից Տաճարը կը հանէ կողմնակի, ուրանօր հաւաքեալ է Գաղղիոյ տասնամեայ աշխատութեան արձանաց խումբը և յետոյ նկարքն : Մտնենք հետզհետէ խուզարկու աշքը այն մանր սենեկաց շարքը, որոց իւրաքանչիւրն արուեստաւորի մը մասնական ցոյցն կը բովանդակէ : Անհամար թուով գողտրիկ և հսկայ արձանաց վրայ զշիրն կարծես վրձնյն հաւասար փափկութեամբ իւր զդացման հետքը թողած է : Անկենդան գաճն և կուճն աստ նոյն կենդանութեամբ՝ թունց բոյնը բռնող անմեղ տղու մը գէմբը կը ներկայացունէ քեզ . և ապա քիչ մանգին, որարդի մը օրհասական տագնապը՝ յանկարծօրէն մօտ արջու մը ճիրանաց մէջ ըմբռնուած՝ անոր ձագը սպաննած ըլլալուն համար : Նիւթք անժիւ են . առասպելական, զիցարանական, կենսագրական, փոփոխակի զուարթ և տիսուր արձանաց մէջ լըլե-